Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
օգոստոսի 4-ի N 1062 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հուլիսի 29-ի N 971 - Ն որոշման

III. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

28. Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները նախատեսված են առաջիկա հինգ տարիների համար և ընդգրկում են մեր երկրի ագրոպարենային համակարգի առանցքային ճյուղերից մեկը՝ բուսաբուծությունը:

29. Իրականացվող միջոցառումները

2010 թվական

2010թ. նախատեսվում է Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի «Սեմենա Ստավրոպոլյա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք բերել մինչև 950 և հանրապետության սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերել մինչև 500 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, ընդամենը՝ 1450 տոննա, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել շուրջ 4830 հա տարածության վրա՝ 300 կգ/հա ցանքի նորմայով:

Սերմացուն՝ հիմք ընդունելով հողի սեփականության կամ վարձակալության վկայականները, հողատարածքների ընտրության արդյունքում, կհատկացվի 3 և ավելի հեկտար հողատարածք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին՝ 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելու պայմանով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի <Սերմերի գործակալություն> ՊՈԱԿ-ի, համայնքի ղեկավարի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա: Նույն պայմանագրով կամրագրվեն նաև հողի մշակության, կիրառվող ագրոտեխնիկայի և սերմացուի հետվերադարձի պայմանները: Սերմացուի տրամադրումից հետո կկատարվի փաստացի ցանքերի ուսումնասիրություն:

Արդյունքում 2011թ. ակնկալվում է հետ ստանալ 2900 տոննա (1450 X 2) առաջին վերարտադրության սերմացու: Սերմացուն պարտադիր պետք է ունենա ծագումը և որակը հավաստող փաստաթղթեր:

Նախարարությանը 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելուց հետո տնտեսավարողների մոտ մնացած սերմացուն կտնօրինվի վերջիններիս կողմից, ըստ իրենց հայեցողության:

2011թ. նախատեսվում է հետ վերադարձված 2900 տոննա առաջին վերարտադրության սերմացուն, 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելու պայմանով,

տրամադրել շահառուներին առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել շուրջ 9660 հա տարածության վրա՝ 300 կգ/հա ցանքի նորմայով:

2900 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով, համամասնորեն կհատկացվի Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին՝ հաշվի առնելով վերջին 5 տարիների ընթացքում մարզերում կատարված աշնանացան ցորենի ցանքերի միջին ցուցանիշը՝ համաձայն աղյուսակի:

2011թ. շահառուների կողմից ծրագրով նախատեսված 1-ին վերարտադրության 2900 տոննա սերմացուների հետ վերադարձը ամբողջությամբ չապահովելու դեպքում, ծրագիրը լիարժեք իրականացնելու համար պակասը կլրացվի 2012թ, իսկ տվյալ տարվա մարզերին հատկացվելիք սերմացուների քանակությունները համամասնորեն կնվազեցվեն՝ համաձայն գործակցի:

2011 թվականին Հայաստանի Հանրապետության մարզպետարանները՝ պայմանագրային հիմունքներով, 2900 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն կհատկացնեն մարզի շահառուներին առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով՝ 2012 թվականին բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ՝ հետ վերադարձվող 1 կգ-ի համար սահմանելով 80 դրամ: Գումարը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվին փոխանցելու պայմանով:

2011 թվական

2011թ. նախատեսվում է Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի «Սեմենա Ստավրոպոլյա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք բերել մինչև 800 և հանրապետության սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերել մինչև 900 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, ընդամենը՝ 1700 տոննա, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել շուրջ 5660 հա տարածության վրա՝ 300 կգ/հա ցանքի նորմայով:

Սերմացուն՝ հիմք ընդունելով հողի սեփականության կամ վարձակալության վկայականները, հողատարածքների ընտրության արդյունքում, կհատկացվի 3 և ավելի հեկտար հողատարածք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին՝ 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելու պայմանով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի <Սերմերի գործակալություն> ՊՈԱԿ-ի, համայնքի ղեկավարի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա: Նույն պայմանագրով կամրագրվեն նաև հողի մշակության, կիրառվող ագրոտեխնիկայի և սերմացուի հետվերադարձի պայմանները: Սերմացուի տրամադրումից հետո կկատարվի փաստացի ցանքերի ուսումնասիրություն:

Արդյունքում 2012թ. ակնկալվում է հետ ստանալ 3400 տոննա (1700 X 2) առաջին վերարտադրության սերմացու: Սերմացուն պարտադիր պետք է ունենա ծագումը և որակը հավաստող փաստաթղթեր:

Նախարարությանը 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելուց հետո տնտեսավարողների մոտ մնացած սերմացուն կտնօրինվի վերջիններիս կողմից, ըստ իրենց հայեցողության:

2012թ. հետ վերադարձված 3400 տոննա առաջին վերարտադրության սերմացուն 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելու պայմանով՝ կտրամադրվի շահառուներին առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով , որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել շուրջ 11330 հա տարածության վրա՝ 300 կգ/հա ցանքի նորմայով:

3400 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով, համամասնորեն հատկացնել Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին՝ հաշվի առնելով վերջին 5 տարիների ընթացքում մարզերում կատարված աշնանացան ցորենի ցանքերի միջին ցուցանիշը:

2012թ. շահառուների կողմից ծրագրով նախատեսված 1-ին վերարտադրության 3400 տոննա սերմացուների հետ վերադարձը ամբողջությամբ չապահովելու դեպքում, ծրագիրը լիարժեք իրականացնելու համար պակասը կլրացվի 2013թ, իսկ տվյալ տարվա մարզերին հատկացվելիք սերմացուների քանակությունները համամասնորեն կնվազեցվեն՝ համաձայն գործակցի:

2012 թվականին Հայաստանի Հանրապետության մարզպետարանները՝ պայմանագրային հիմունքներով, 3400 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն կհատկացնեն շահառուներին առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով՝ 2013 թվականին բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ պարենային ցորենի արժեքի չափով գումարը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվին փոխանցելու պայմանով:

Պարենային ցորենի արժեքը կսահմանվի ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկով ՀՀ կառավարության կողմից:

2012 թվական

2012թ. նախատեսվում է Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի <<Սեմենա Ստավրոպոլյա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք բերել մինչև 600 և հանրապետության սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերել մինչև 1500 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, ընդամենը՝ 2100 տոննա, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել շուրջ 7000 հա տարածության վրա՝ 300 կգ/հա ցանքի նորմայով:

Սերմացուն՝ հիմք ընդունելով հողի սեփականության կամ վարձակալության վկայականները, հողատարածքների ընտրության արդյունքում, կհատկացվի 3 և ավելի հեկտար հողատարածք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին՝ 1:2 փոխհարա-բերությամբ հետ վերադարձնելու պայմանով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի <Սերմերի գործակալություն> ՊՈԱԿ-ի, համայնքի ղեկավարի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա: Նույն պայմանագրով կամրագրվեն նաև հողի մշակության, կիրառվող ագրոտեխնիկայի և

սերմացուի հետվերադարձի պայմանները: Սերմացուի տրամադրումից հետո կկատարվի փաստացի ցանքերի ուսումնասիրություն:

Արդյունքում 2013թ. ակնկալվում է հետ ստանալ 4200 տոննա (2100 X 2) առաջին վերարտադրության սերմացու: Սերմացուն պարտադիր պետք է ունենա ծագումը և որակը հավաստող փաստաթղթեր:

Նախարարությանը 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելուց հետո տնտեսավարողների մոտ մնացած սերմացուն կտնօրինվի վերջիններիս կողմից, ըստ իրենց հայեցողության:

2013թ. նախատեսվում է հետ վերադարձված 4200 տոննա առաջին վերարտադրության սերմացուն 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելու պայմանով՝ տրամադրել շահառուներին առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել շուրջ 14000 հա տարածության վրա՝ 300 կգ/հա ցանքի նորմայով:

4200 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն ««Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով, համամասնորեն հատկացնել Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին՝ հաշվի առնելով վերջին 5 տարիների ընթացքում մարզերում կատարված աշնանացան ցորենի ցանքերի միջին ցուցանիշը:

2013թ. շահառուների կողմից ծրագրով նախատեսված 1-ին վերարտադրության 4200 տոննա սերմացուների հետ վերադարձը ամբողջությամբ չապահովելու դեպքում, ծրագիրը լիարժեք իրականացնելու համար պակասը կլրացվի 2014թ, իսկ տվյալ տարվա մարզերին հատկացվելիք սերմացուների քանակությունները համամասնորեն կնվազեցվեն՝ համաձայն գործակցի:

2013 թվականին Հայաստանի Հանրապետության մարզպետարանները՝ պայմանագրային հիմունքներով, 4200 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն կհատկացնեն մարզի շահառուներին առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով՝ 2014 թվականին բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ պարենային ցորենի արժեքի չափով գումարը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվին փոխանցելու պայմանով:

Պարենային ցորենի արժեքը կսահմանվի ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկով ՀՀ կառավարության կողմից:

2013 թվական

2013թ. նախատեսվում է Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի «Սեմենա Ստավրոպոլյա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք բերել մինչև 450 և հանրապետության սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերել մինչև 1950 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, ընդամենը՝ 2400 տոննա, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել շուրջ 8000 հա տարածության վրա՝ 300 կգ/հա ցանքի նորմայով:

Սերմացուն՝ հիմք ընդունելով հողի սեփականության կամ վարձակալության վկայականները, հողատարածքների ընտրության արդյունքում, կհատկացվի 3 և ավելի հեկտար հողատարածք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին՝ 1:2 փոխհարա-

բերությամբ հետ վերադարձնելու պայմանով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի <Սերմերի գործակալություն> ՊՈԱԿ-ի, համայնքի ղեկավարի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա: Նույն պայմանագրով կամրագրվեն նաև հողի մշակության, կիրառվող ագրոտեխնիկայի և սերմացուի հետվերադարձի պայմանները: Սերմացուի տրամադրումից հետո կկատարվի փաստացի ցանքերի ուսումնասիրություն:

Արդյունքում 2014թ. ակնկալվում է հետ ստանալ 4800 տոննա (2400 X 2) առաջին վերարտադրության սերմացու: Սերմացուն պարտադիր պետք է ունենա ծագումը և որակը հավաստող փաստաթղթեր:

Նախարարությանը 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելուց հետո տնտեսավարողների մոտ մնացած սերմացուն կտնօրինվի վերջիններիս կողմից, ըստ իրենց հայեցողության:

2014թ. նախատեսվում է հետ վերադարձված 4800 տոննա առաջին վերարտադրության սերմացուն 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելու պայմանով՝ տրամադրել շահառուներին առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել շուրջ 16000 հա տարածության վրա՝ 300 կգ/հա ցանքի նորմայով:

4800 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով, համամասնորեն հատկացնել Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին՝ հաշվի առնելով վերջին 5 տարիների ընթացքում մարզերում կատարված աշնանացան ցորենի ցանքերի միջին ցուցանիշը:

2014թ. շահառուների կողմից ծրագրով նախատեսված 1-ին վերարտադրության 4800 տոննա սերմացուների հետ վերադարձը ամբողջությամբ չապահովելու դեպքում, ծրագիրը լիարժեք իրականացնելու համար պակասը կլրացվի 2015թ, իսկ տվյալ տարվա մարզերին հատկացվելիք սերմացուների քանակությունները համամասնորեն կնվազեցվեն՝ համաձայն գործակցի:

2014 թվականին Հայաստանի Հանրապետության մարզպետարանները՝ պայմանագրային հիմունքներով, 4800 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն կհատկացնեն մարզի շահառուներին առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով՝ 2015 թվականին բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ պարենային ցորենի արժեքի չափով գումարը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվին փոխանցելու պայմանով:

Պարենային ցորենի արժեքը կսահմանվի ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկով ՀՀ կառավարության կողմից:

2014 թվական

Նախատեսվում է հանրապետության սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերել մինչև 3300 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել շուրջ 11000 հա տարածության վրա՝ 300 կգ/հա ցանքի նորմայով:

Սերմացուն՝ հիմք ընդունելով հողի սեփականության կամ վարձակալության վկայականները, հողատարածքների ընտրության արդյունքում, կհատկացվի 3 և ավելի հեկտար հողատարածք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին՝ 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելու պայմանով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի <Սերմերի գործակալություն> ՊՈԱԿ-ի, համայնքի ղեկավարի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա: Նույն պայմանագրով կամրագրվեն նաև հողի մշակության, կիրառվող ագրոտեխնիկայի և սերմացուի հետվերադարձի պայմանները: Սերմացուի տրամադրումից հետո կկատարվի փաստացի ցանքերի ուսումնասիրություն:

Արդյունքում 2015թ նախատեսվում է հետ ստանալ 2014թ. 3300 տոննա էլիտային սերմացուի հետ վերադարձից ստացված 6600 տոննա (3300 X 2) առաջին վերարտադրության սերմացուն, որով հնարավոր կլինի ցանք կատարել 22000 հա տարածության վրա: Սերմացուն պարտադիր պետք է ունենա ծագումը և որակը հավաստող փաստաթղթեր:

6600 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով, համամասնորեն հատկացնել Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին՝ հաշվի առնելով վերջին 5 տարիների ընթացքում մարզերում կատարված աշնանացան ցորենի ցանքերի միջին ցուցանիշը:

2015թ. շահառուների կողմից ծրագրով նախատեսված 1-ին վերարտադրության 6600 տոննա սերմացուների հետ վերադարձը ամբողջությամբ չապահովելու դեպքում, ծրագիրը լիարժեք իրականացնելու համար պակասը կլրացվի 2016թ, իսկ տվյալ տարվա մարզերին հատկացվելիք սերմացուների քանակությունները համամասնորեն կնվազեցվեն՝ համաձայն գործակցի:

2015 թվականին Հայաստանի Հանրապետության մարզպետարանները՝ պայմանագրային հիմունքներով, 6600 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն կհատկացնեն մարզի շահառուներին առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով ՝ 2016 թվականին բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ պարենային ցորենի արժեքի չափով գումարը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվին փոխանցելու պայմանով:

Պարենային ցորենի արժեքը կսահմանվի ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկով ՀՀ կառավարության կողմից:

Ծրագրի իրականացման 3-րդ տարուց (2012 թվական) սկսած մինչև 2016 թվականը նախատեսվում է ծրագրում առավելագույնը մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարելու հաշվարկով ընդգրկված շահառուներիc հետ ստանալ համապատասխանաբար 5800.0, 6800.0, 8400.0, 9600.0 և 13200.0՝ ընդամենը 43800.0 տոննա պարենային ցորենի արժեք:

Մեկ տոննան 80000 դր միջին շուկայական արժեքի դեպքում ընդհանուր գումարը համապատասխանաբար կկազմի 464.0, 544.0, 672.0, 768.0 և 1056.0 մլն դրամ, ընդհամենը՝ 3504.0 մլն. դրամ (43800տ. X 80000դ. = 3504,0 մլն. դրամ), որը ըստ տարիների կփոխանցվի «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվին:

Տեղական սերմարտադրողների կարողությունները հզորացնելու, սերմնաբուծության զարգացման և ցորենի արտադրության ծավալներն ավելացնելու նպատակով առաջարկվում է շրջանառու հիմնադրամի 3504.0 մln դրամ գումարն օգտագործել հետևյալ նպատակներով՝

ա) Սերմնաբուծության զարգացման համար ձեռք բերել բարձր վերարտադրության (սուպերէլիտա, էլիտա) սերմացուներ և մատչելի գներով հատկացնել հանրապետության բարձր վերարտադրության սերմացուներ արտադրող պետական կամ մասնավոր ընկերություններին ու ֆերմերներին:

բ) Սերմնաբուծության զարգացման համար ձեռք բերել անհրաժեշտ տեխնիկա և սարքավորումներ՝ հանրապետության բարձր վերարտադրության (սուպերէլիտա, էլիտա) սերմացուներ արտադրող պետական կամ մասնավոր ընկերություններին և ֆերմերներին մատչելի գներով տրամադրելու նպատակով:

Նկատի ունենալով ցորենի ռազմավարական նշանակությունը, նշված ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրացնելու հողօգտագործողների շահագրգռվածությունը ցորենի մշակության նկատմամբ, վերջինիս ցանքատարածությունները 2014թ. հասցնելու 115-120 հազ հեկտարի և 30 ց/հա միջին բերք ապահովելու պայմաններում արտադրելու 345-360 հազ տոննա ցորեն, կամ 2010թ. կանխատեսվող 160.0- 170,0 հազ. տոննայից ավել արտադրել 175-190 հազ տոննա: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա նաև նվազեցնելու արտերկրից ցորենի ներմուծումները և ինքնաբավության մակարդակը հանրապետությունում 37%-ից հասցնելու 50-55%-ի:

Աղյուսակ 1

2005-2009 թվականներին ՀՀ-ում աշնանացան ցորենի միջին ցանքատարածությունները, 2010թ. ՌԴ-ից ներկրված 950 տոննա աշնանացան ցորենի էլիտային սերմացուի դիմաց արտադրված և ետ վերադարձվող 1900 տոննա 1-ին վերարտադրության, ՀՀ-ում տեղական սերմարտադրողներից գնված աշնանացան ցորենի 117 տոննա էլիտային սերմացուի դիմաց արտադրված և ետ վերադարձվող 334 տոննա 1-ին վերարտադրության, ինչպես նաև պակասը լրացնելու նպատակով 2011թ. գնվող 766 տոննա 1-ին վերարտադրության սերմացուների ըստ մարզերի բաշխում (հաշվարկված գործակցով)

N	Մարզեր	Կատարվել է աշնանացան					5 տարվա միջին ցանք	Ընդամենը մարզին հատկացվող քանակը (ՌԴ-ից և ՀՀ-ից) /տոննա/
		2005-ին կատարած 2006-ի բերքի տակ	2006-ին կատարած 2007-ի բերքի տակ	2007-ին կատարած 2008-ի բերքի տակ	2008-ին կատարած 2009-ի բերքի տակ	2009-ին կատարած 2010-ի բերքի տակ		
1	Արագածոտն	8812	10260	8185	8281	8312	8770,0	282
2	Արարատ	8280	5353	4290	4136	3895	5190,8	167
3	Արմավիր	11431	7161	6469	6694	5255	7402,0	238
4	Գեղարքունիք	14936	14775	15195	11928	17777	14922,2	481
5	Լոռի	9289	9595	8015	7136	6446	8096,2	261
6	Կոտայք	7552	7486	7265	6599	4875	6755,4	218
7	Շիրակ	21921	23234	21272	21422	18778	21325,4	687
8	Սյունիք	12850	13161	12572	14058	11154	12759,0	411
9	Վայոց ձոր	1251	870	995	1367	1027	1102,0	35
10	Տավուշ	4369	3468	3488	3183	4131	3727,8	120
Ընդամենը		**100691**	**95363**	**87746**	**84804**	**81650**	**90050,8**	2900

2011թ. մարզերին հատկացվող 2900 տոննա 1-ին վերարտադրության սերմացուի բաշխման գործակից (2900 տոննա / 90050.8 հա)՝ 0,032204045

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

11_1062.doc

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
օգոստոսի 4-ի N 1062 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հուլիսի 29-ի N 971 - Ն որոշման

« VI ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻՑ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՍԵՐՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ, ԱՐԺԵՔՆԵՐԸ, ՄԱՔՍԱՔԵՐԾՄԱՆ, ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, «ՍԵՐՄԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-ՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

2010թ. ՀՀ պետական բյուջեում նախատեսված է՝
- պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին - 558.0 մլն դրամ
- գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրման համակարգում - 20.835 մլն դրամ
այդ թվում՝
- գյուղ. հողօգտագործողներին պետ աջակցութ. տրամադր. համակարգում - 15.0 մլն դրամ
- <Սերմերի գործակալություն> և <Ագրոքիմիական ծառայություն> ՊՈԱԿ-ների կարողությունների հզորացում - 5.835 մլն դրամ
2011թ միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է՝
- պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին - 550,0 մլն դրամ
- գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրման համակարգում - 20.835 մլն դրամ

2010թ. արտերկրից սերմի ներմուծում 950 տոննա X 400 դր = 380.0 մլն դրամ
ԱԱՀ 380.0 մլն X20% = 76.0 մլն դրամ
Տեղական սերմնաբուծական տնտեսություններից 500 տոննա X 160դր = 80.0 մլն դրամ
Արտերկրից ներկրված և տեղում ձեռք բերված սերմացուների բեռնման, բեռնաթափման, ՀՀ մարզկենտրոններ տեղափոխման և այլ ծախսեր -22.0 մլն դրամ
380,0 + 76.0 + 80.0 + 22.0 = 558.0 մլն դրամ
558.0 + 20.835 = 578.835 մլն դրամ

2011թ. արտերկրից սերմի ներմուծում 800 տոննա X 400դր = 320,0 մլն դրամ

ԱԱՀ 320.0 մլն.դրամ X 20%= 64,0 մլն. դրամ

Տեղական սերմնաբուծական տնտեսություններից 900 տոննա X 210դր = 189.0 մլն դրամ

Արտերկրից ներկրված և տեղում ձեռք բերված սերմացուների բեռնման,
բեռնաթափման, ՀՀ մարզկենտրոններ տեղափոխման և այլ ծախսեր -22.0 մլն. դրամ

320.0 + 64.0 + 189.0 + 22.0 = 595,0 մլն դրամ

595.0 +20.835 =615,835 մլն դրամ

2012թ. արտերկրից սերմի ներմուծում 600 տոննա X 400 դր = 240.0 մլն. դրամ

ԱԱՀ 240.0 մլն X 20% = 48.0 մլն. դրամ

Տեղական սերմնաբուծական տնտեսություններից 1500 տոննա X 210դր = 315,0 մլն. դրամ

Արտերկրից ներկրված և տեղում ձեռք բերված սերմացուների բեռնման,
բեռնաթափման, ՀՀ մարզկենտրոններ տեղափոխման և այլ ծախսեր -22.0 մլն դրամ

240.0 + 48.0 + 315,0 + 22.0 = 625,0 մլն դրամ

325,0 +20.835 =645,835 մլն դրամ

2013թ. արտերկրից սերմի ներմուծում 450 տոննա X 400դր = 180.0 մլն դրամ

ԱԱՀ 160.0 մլն X 20% = 36.0մլն. դրամ

Տեղական սերմնաբուծական տնտեսություններից 1950 տոննա X 210դր = 409,5 մլն դրամ

Արտերկրից ներկրված և տեղում ձեռք բերված սերմացուների բեռնման,
բեռնաթափման, ՀՀ մարզկենտրոններ տեղափոխման և այլ ծախսեր -22.0 մլն դրամ

180.0 + 36.0 +409,5 +22.0 = 647,5 մլն դրամ

647,5 +20.835 =668,335 մլն դրամ

2014թ. արտերկրից սերմի ներմուծում -

ԱԱՀ -

Տեղական սերմնաբուծական տնտեսություններից 3300 տոննա X 210դր = 693,0 մլն դրամ

Տեղում ձեռք բերված սերմացուների բեռնման, բեռնաթափման,
ՀՀ մարզկենտրոններ տեղափոխման և այլ ծախսեր -22.0 մլն դրամ

693,0 + 22.0 = 715,0 մլն դրամ

715,0 +20.835 =735,835 մլն դրամ

2010թ. 578.835 մլն դրամ
2011թ. 615,835 մլն դրամ
2012թ. 645,835 մլն դրամ
2013թ. 668,335մլն դրամ
2014թ. 735,835 մլն դրամ
Ընդամենը՝ 3244,675 մլն դրամ

Տարեթիվ	Արտերկրից ներմուծում			Տեղական արտադրության սերմացուների ձեռքբերում			Ընդամենը	
	տոննա	1 տ-ի արժեքը (հազ. դր)	Ընդ. արժեքը (մլն. դր.)	տոննա	1 տ-ի արժեքը (հազ. դր)	Ընդ. արժեքը (մլն. դր.)	տոննա	մլն. դր.
2010	950	400.0	380.0	500	160.0	80.0	1450	460,0
2011	800	400.0	320.0	900	210.0	189.0	1700	509,0
2012	600	400.0	240.0	1500	210.0	315.0	2100	555,0
2013	450	400.0	180.0	1950	210.0	409,5	2400	589,5
2014	-	-	-	3300	210.0	693.0	3300	693.0
Ընդամենը	2800	400.0	1120.0	8150	210.0	1686,5	10950	2806,5

Ծրագրում ըստ տարիների ամրագրված սերմացուների գները նախնական հաշվարկային են և ենթակա են փոփոխության գնման գործընթացի արդյունքում:

Ծրագրի շրջանակներում տեղական սերմարտադրողներից սերմացուները ձեռք բերելիս ղեկավարվել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի դրույթով: »

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ